

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին 40 ՄԶԸ.
Պաշտոնային 12 »
Վեցամս. 3 Պայտայ 3 »
Պաշտոնային 6 »
Ստոր երկրորդ 2 1/2 լ.
Մանուկների տոգոր մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուր է. աւելի անգամներու
համար գաւա սահմանափակ չի
լայ :
Խորանշինք թիւ 40 փարա արծա :



ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրու զննողած լրագրող ճանաչ-
ած աղբը խորագրու թիւն վրայ է :
Լրագրողս վերաբերեալ նախա-
կամ որ և ինչ գրուի ինչ խորագրի
— Տնօրէնին պիտի ուղարկուի, զայս-
միա Սանտրոքըլար շահատէսի թիւ
198, Նօրո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանաչու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, եւ
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 4 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գերմանիոյ խորհրդարանին մէջ
ղինուորական ծրագրին վրայ վիճա-
բանութիւններն սկսան : Այս ծրագ-
րին, ինչպէս կը յիշուի, խաղաղու-
թեան ժամանակ Գերմանիոյ զինուո-
րական զօրութեան վրայ 26,000 մարդ-
է քանի մը հարիւր թնդանօթ կը յա-
ւելու, որով պատերազմի ժամանակ
գիւրաւ պիտի իրնայ 90,000 զօրք ա-
ւելի հանել, քան որչափ կրնայ հա-
նել այժմ : Մարտ 1-ի (Ն. Տ.) նիստը
նշանաւոր եղաւ այս ծրագրոյն վը-
րայ բացուած վիճաբանութեան
կամ աւելի ճիշդ մէջ ըսել տրուած
բացատրութեան մասին, որովհե-
տե մասնաւոր պատճառներ կան,
որոց նայելով Պիսմարք իշխանին և
Մարեշալ Մօլթեի կոմսին առաջար-
կած սոյն զինուորական ծրագիրը գը-
րեթէ առանց վիճաբանութեան պի-
տի ընդունուի : Գերմանիոյ խորհըր-
դարանին նոյն աւուր նստին մէջ քա-
նի մասնաւորներէ ետե, Մարե-
շալ Մօլթեի խօսք աւելնով, մեծ պար-
զութեամբ և համարձակութեամբ
պաշտպանեց ներկայացուած ծրագիրն :
Երբ նշանաւոր և բազմաթիւն զօրա-
վարը բեմին վրայ տեսնուեցաւ, բո-
լոր խորհրդարանը մէկ մարդու պէս
ոտք ելաւ և եկաւ բեմին դիմացը
շարուեցաւ կիսաշրջանակ մը կազմե-
լով, որպէս զի պատկառելի ծերուն-
ւոյն խօսքերէն բաւ մը չլիախոյնեն :
Պէտք է գիտել աստ որ թէ և քաղա-
քական խնդրոց մասին Գերմանիոյ
խորհրդարանը սարսափելի կերպիւ
բաժանեալ է, և Պիսմարք իշխանին
ոչ մէկ խօսքն առանց առարկութեան
կը մնայ, այսու ամենայնիւ, երբ իրն-
գիրը զինուորական գործոց վրայ լի-
նի և աղբային պահպանութեան գոր-
ծին հետ յարաբերութիւն ունենայ,
Գերմանիոյ երեսփոխանաց հայրենա-
սիրութիւնն այնչափ մեծ է, որ բո-
լոր կաւաւիցութիւնը անմիջապէս կը
համաձայնին, և երբ Մօլթեի է որ
ձեռն խօսք, կանխաւ վստահ է որ իւր
խօսքերը պատգամի պէս պիտի ըն-
դունուին : Այսպէս եղաւ մարտ 1-ի
նստին մէջ : Հռչակաւոր զօրավարն
երկար ասանաբանութիւն մ'ըրաւ,
որ յաճախ կ'ընդհատուէր ծախհա-
րութեամբ և հաւանութեան աղա-
ղակներով, և այժմ ստոյգ է որ իւր
առաջարկած ծրագրին առանց մեծ
առարկութեան և գրեթէ առանց վի-
ճաբանութեան պիտի ընդունուի :
Մարեշալ Մօլթեի հաստատելու հա-
մար թէ ներկայացուած ծրագրին «ար-
դար», ի դէպ և հարկաւոր էր, քա-
ղաքական նկատողութեանց մէջ խո-
րատուելու պէտք չունեցաւ, և ա-
մենապարզ պատճառներ տուաւ : Բա-

ցատրեց թէ Գերմանիա բացառիկ
գիրք մ'ունէր իւր դրացեաց հետ
բաղդատմամբ : մինչդեռ ասոնք ի-
րենց կռնակը ծովու մը, կամ Պիրէն-
եան և Ալպեան լեռանց շղթայներու
պէս բնական պատուարներու յեցած
են, ինչպէս են Գաղղիա, Աւստրիա և
Իտալիա, կամ իրենց ետին բարբարոս
աղբեր միայն ունին, որոցմէ չեն կըր-
նար վախճալ, ինչպէս է Ռուսիա, —
Գերմանիա ընդհակառակն իւրովի-
ոյ զինուորական ամենամեծ տէրու-
թեանց ճիշդ մէջ տեղը կը գտնուի,
առանց բնական պատուարի : Հետե-
ւաբար, երբ Եւրոպիոյ տէրութիւնը
իրենց մէկ կողմի սահմանադրուի
պաշտպանելով իրան շատանալ Գեր-
մանիա իւր սահմանադրութիւն ամեն
կողմն հաւասար քանակութեամբ
զօրք պարտի ունենալ ի հարկին ա-
նոնց ամենուն դէմ ինքզինք պաշտ-
պանել կարենալու համար : Ասկից
դատ, ըսաւ, Գերմանիա չըջապատող
աւելութեանց բանակներն հետըզ-
հետէ կ'ստուարանան : Ռուսիա նոր
կազմակերպութիւն մը տուաւ իւր
բանակին, և մի միայն հետեւադո-
րաց վրայ 24 հար զօրաբաժին ա-
ւելցուց, և 152 դիւղոց ալ պահակ
վաշտերը դէնքի տակ առաւ լուել-
եայն : Գաղղի Գաղղիոյ, նա 1870-ի պա-
տերազմէն ի վեր կրկնապատկած է
իւր զինուորական զօրութիւնն, անկէ
առաջ գաղղիական բանակն առաջին
անգամուն 336,000 հոգի միայն կըր-
նար հանել, իսկ այժմ 670,000 հոգի
կրնայ հանել : Ուշագրկութեան ար-
ժանի է նաեւ որ խաղաղութեան ժա-
մանակ Գերմանիոյ դրացի տէրու-
թիւնը Գերմանիայէն շատ աւելի քա-
նակութեամբ զօրք կը պահեն դէնքի
տակ, Այսպէս, ըստ Պ. Մօլթեի,
Գաղղիա 497,000 զօրք կը պահէ, մինչ-
դեռ Գերմանիա միայն 401,000 հո-
գի, թէ և քանի մը միլիոն բնակիչ
աւելի ունի, իսկ Ռուսիա ասոր կըր-
կնիւր կը պահէ 800,000 հոգի :

Մինչդեռ 1870-էն ի վեր դրացի
տէրութիւնը այսպէս ընդարձակած
են իրենց զինուորական զօրութիւն-
ները, Գերմանիա եօթնամեայ կանո-
նադրին հետեւելով, առջի գրութեան
մէջ նշանցած է, և այժմ նկատելով
գրացեաց զինուորական կացութիւ-
նը, Գերմանիա ինչպէս կրնայ ան-
տեղի վեհանձնութիւն մ'ընել ընդ-
հանուր զինավթուութեան դադարի-
րէն յատադով կանգնելով և առաջին
օրինակն ինք տալով, երբ իր զըրա-
ցիք օր ըստ օրէ իրենց բանակաց թի-
ւին աւելցնելու ետե են : Վերջա-
պէս, Պ. Մօլթեի բացատրեց թէ
երկրի մը մէջ հաստատկային վարին
և ընդհանուր գործաւորութիւնը նոյն
երկրին ապագային ապահովութեան
աստիճանէն կանխաւ ունին : Երբու-
թիւն մը որ իւր ապագայն ապահո-

վելու համար կարելի եղած միջոցնե-
րուն ամենն ալ ի գործ չդնեն, ոչ միայն
ինք իրեն կը մնասէ իբրեւ կառավա-
րութիւն, այլ և մեծ մնաս կուտայ
իւր ժողովրդեան : մանաւանդ Գերմա-
նիա, որ տակաւին նորահաստատ
կայսրութիւն մ'է, և որուն ապագա-
յին վրայ ամեն մարդ երկնակներ
կրնայ ունենալ, և թէ զգուշական ա-
մեն միջոցներ ձեռք չառնուին : Ռու-
սի : « Պաշտպանեմք ամենէն ա-
ռաջ կայսրութեան պատիւն ու ա-
պահովութիւնն, ըսաւ պատկառելի
Մարեշալ իւր վերջաբանին մէջ : պաշտ-
պանեմք աղբին միութիւնը, զոր այն-
քան ժամանակէ ի վեր կը փափաքե-
ինք և վերջապէս ձեռք բերինք : չա-
րունակեմք խաղաղութիւնը պահպա-
նել քանի որ դուրսէն յարձակում
չլինի մեզ, և մեր ձեռքէն եկածին
չափ շարունակեմք պաշտպանել ըզ-
խաղաղութիւնն օտար տէրութեանց
քով ալ : Գուցէ մեք մինակ չպիտի
գտնուիմք այս ջանից մէջ, և թերե-
ւս դաշտակիցներ պիտի գտնուին :
Մէկու մ'ապառնայիք չեմք ընել :
ընդհակառակն, մեր առաջարկած ծը-
րագրին մէջ երաշխաւորութիւն կայ
Եւրոպիոյ խաղաղութեան պահպան-
ուելուն, բայց այն պայմանաւ որ
մեք զօրաւոր լինիմք և զինեալ, ու-
րովհետեւ քանի որ տկար բանակներ
ունենամք և նոքա ալ իրենց տունե-
րը ցրուած լինին, անկարելի է խա-
ղաղութիւնը պահպանել : »

Այս խօսքերը պարզ և մեկին են :
Գերմանիա, կամ գոնէ Գերմանիոյ գը-
րութիւնը գտնուող անձինք, իրենք զի-
րենք ապահով չեն տեսներ երկրին
զինուորական արդի զօրութեան
ուստի կը ջանան աւելի զօրք և զէնք
ունենալ, որպէս զի ոչ ոք իրենց տըկա-
րութեան օգուտ քաղէ, և ասով
պարզ զոռուցութիւն մը միայն ըրած
կը համարին իրենք զիրենք : Գիտելի
է սակայն որ թէ հարցուն Գաղղիոյ
և Ռուսիոյ թէ ինչո՞ւ համար այդ-
քան ահագին բանակներ կը պահեն,
նոքա ալ միևնոյն պատասխանը պիտի
տան, ըսելով թէ իրենց անձնական
ապահովութեան համար է, և մէկու
մ'ապառնայիք չեն ընել : Վախն, ի-
րական կամ ցնորական, փոխադարձ
է սակայն, և այս է ահա որ ընդար-
ձակ բանակեալով մը կերպարանք
կուտայ Եւրոպիոյ ամենէն աւելի քա-
ղաքակրթեալ տէրութեանց երկիր-
ներուն, և ի դերեւ կը հանէ այն
մարդասիրաց յայտերն, որք իրաւամբ
կը պնդեն թէ զէնքերու և ապագա-
մը թերաց համար եղած ահագին ծախ-
քերը մարդ կու թեան և քաղաքակր-
թութեան համար աւելի օգտակար
նպատակներու կրնան գործածուիլ,
ի դերեւ կը հանեն, կըսեմք, այն երա-
զայտներուն կարծիքը կամ փափաքը
թէ օր մը բերեալ թանգարաննե-

րու պիտի փոխուին և զրահաւորնե-
րը վարժարաններու :
Տէր-Ղուկասօֆ Ռուսահայ զօրա-
վարն, որ անցեալ տարի ընդհ. հրամա-
նատարութիւն կրնէր թէքէի թիւրքմէ-
նաց դէմ գործող Ռուսական բանա-
կին իբրեւ յաջորդ հանդուցեալ լաղա-
րէք զօրավարին, վերջերս իւր հրաժա-
րականը տուաւ, և այժմ Տփլիսի կը
գտնուի : Ոմանք կարծիք են թէ թէ
Տէր Ղուկասօֆ արդարեւ յայլմուած
էր թիւրքմէններէն, և թէ իւր պաշ-
տօնանկութիւնը կամ հրաժարումը
զինուորական անյաջողութեան ար-
դիւնքն է : Բայց կը հաստատուի այ-
ժմ թէ իկարի և Երևանայ նախկին
հրամանատարն այդպիսի դժբաղդու-
թիւններ չէ ունեցած : Իրաւ է որ
թիւրքմէնաց դէմ բացուած պատե-
րազմն յաջող եղբ մը չունեցաւ, բայց
այս իրողութիւնն աւելի ներքին պատ-
ճառներու արդիւնք լինիլ կը թուի
քան թէ արտաքին, և Տէր Ղուկա-
սօֆ զօրավարն այդ ներքին պատճա-
ռաց չվերնադրու պատճառաւ հրաժա-
րական տուած է : Թիւրքմէններուն
դէմ գործող Ռուսական բանակին ան-
յաջողութեանց մէկ մասն յոյժ չա-
փաղանցեալ է, և միւս մասին հա-
մար ալ կը հաստատուի թէ Տէր Ղու-
կասօֆ պատասխանատու չէր : Այս
զօրավարը կը պահանջէր որ գործու-
ղութեանց մէջ միութիւն, կանոնա-
ւորութիւն և արագութիւն կարենալ
լինելու համար, ինք արտօնութիւն
ունենայ իւր ընտրած սպայներն իւր
շուրջը հաւաքելու և բանակին ու-
սեստի և ուրիշ պիտոյի մատակա-
րարութեան մէջ զօլաքաղութիւնն ու
գաղութիւններն արդիւնք լիազօր
իշխանութիւն ունենայ : Բայց կայսրն
և Միքայէլ Մեծ դուքսը՝ փոխա-
նակ այսպիսի անկեղծ զօրավարն
մը պաշտպան կանգնելու, կարգ մը զին-
ւորական և քաղաքային ազնուա-
կան կամ մեծահարուստ մարդոց կող-
մը բռնած լինիլ կը թուին, որք սա-
կայն գործին վերջնական յաջողու-
թեան մեծ արդեւրքներ էին : Ռուսի
Տէր Ղուկասօֆ չլրնալով իւր առա-
ջարկներն ընդունել տալ, հրաժարա-
կան տուեւր է, և կ'երեւի թէ անոր
տեղ Սթոպէլէֆ զօրավարը՝ Բլեմնայի
գիւցապնը՝ պիտի անցնի :

ՀԱՅԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 15 մարտ
Արտաքին գործոց նախարարութեան
խորհրդական Պ. Պուրք՝ երեսփոխանաց
ժողովոյն մէջ հարցման մը պատասխա-
նելով յայտնեց թէ Թուրքո-Հելլենական
սահմանագիծն այն տեղերուն վրայ ու-
սուցմանիւրու ողաւան ունեցող Եւրո-
պական յանձնարարութիւն Պէրլինի դաշնա-
գրին թիւրք առեւտրութիւնէն կը ծա-

Գ.Ա.Ս.Ա.Գ.Ի.Ր.Գ.

ՀԱՅ-ԱՂՁԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Ի ՊԵՏԱ ԱՂՁԱՅԻՆ ՎԱՐՈՒՐԱՐԱՆԱՅ

Գրեց Մ. Գաբրիելյան
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Գրեց է 4 դրչ արժամ: Կը գըլ-
նուի Թ. Գաբրիելյանի գրառումն և
այլ ամեն Հայ գրառումաց քով:

ՅԵՇԱՏԱԿԻ ՍԻՊԵՐԻԱԿԱՆԻ ՄԸ

Մոյն գրքը որ Մամուլեան է-
ֆէնտիլի մէկ նոր խարդամանութիւնն
է և որ իզմիրէն հասած է, կը ծախ-
ւի Ս. Ղուկասեանի գրառումն, Եֆէնի
ճամբի Ձիւղիկը և հաստէսի, թիւ 2
Գին 2 փոսնք:

ԳՆՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՆ ՀԱՅՈՑ

Ըստ նորագոյն պատմական, լեզուաբա-
նական և բանասիրական տեղեկութեան

Ա. Մ. Գաբրիելյան

ՄԱՍՆ Ա.

ՆԱԽԱՊԱՆԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1880 Տպագրութիւն Թ. Գաբրիելյան

Ամենակարեւոր և հմայալից աշխա-
տութիւն մը, որ մեր ազգին ծագու-
մին ու պատմութիւնը իւր փայտա-
նական փնտիսէ հանելով տրամաբա-
նական փնտիսի կը վերածէ:

Կը գտնուի Գիւրգիսի խան վարի
յարկ թիւ 23 Գիւրգիսի Գաբրիելյանի
գրառումը, նաև Չարմադըրար Նոյ-
նին գրառումը և այլ մի քանի գը-
րառումաց քով:

Գին 1 արծաթ մէճիտ:

ԱՂՁԱՅԻՆ ԶՈՋԵՐ

Թ. Թ. Պաբոնյան

Լոյսի մէջ հրատարակեալ այլ և
այլ անձանց կենսագրութիւններուն
հաւաքածոյն է՝ Գաբրիելյան տրպա-
նէնրա երաժ՝ մաքուր տպագրու-
թեամբ:

Կը գտնուի Գին Գաբրիելյանի
գրառումը, նաև կը գտնուի Լոյսի
գրառումն և ամեն գրառումաց
քով և Սուրբ Պօղոս ազգային խանու-
թը. գին կէս արծաթ մէճիտ:

Ա.Զ.Դ.

Ներսէս Է. ազգի պաշտպան Կա-
թողիկոսի մեծաշէն և խորհրդաւոր
պատկերն, գործ հայրենասէր նըկա-
րիչ Պ. Ներսէսեանցի Տփլիսեցւոյ,
կա ծախուի ի Պոլսի գրառումաց Պ.
Ս. Ղուկասեանի մօտ: Իսկ ի Զմիւ-
ռին, առաջնորդարանի Տաճկերէնի
գրառումաց Օհան Էֆէնտի Մարաշ-
լեանի մօտ, գին երկու մէճիտ:

Մոյն պատկերը կարող է գեղե-
ցիկ զարդ լինիլ ամեն Հայ տուններու
համար:



ՋԵՐՄԻ ԴԵՂ

Տոքթոր Այերի Ջերմի դեղը ա-
մեն որ և իցէ տեսակ Ջերմ իսկոյն կը
բժշկէ. չկայ դեղ մը որ ասոր չափ
օգտակար ըլլայ Ջերմի. Ջերմ բռնող
ները պարապ տղը կը տանջուին քա-
նի որ աս դեղը կայ, պէտք է որ ան-
միջապէս անկէ գործածեն: Արդ էն
Պօլսոյ և գաւառներուն մէջ ճանցը-
ւած է աս դեղը ու անոյ թշուառնե-
րը գիտեն անոր յարգը: Նախ ուրիշ
տրամի չափ հէշ Է-ի խմելու է իւ-
րե մաքրողական դեղ ու ետքը աս
Ջերմի դեղէն (Ջերմը չբռնած) օրը
չորս անգամ մէյմէկ անուշի դրդալ
ու շրի հետ խառնելով խմելու է, աս
միջապէս կանցնի: Տղայոց աւելի քիչ
տալու է. կը ծախուի Կ. Պօլսի Գա-
րառում Միմասեան և ընկերաց Ամե-
րիկայի մաղաղան:



ՇԻՐԻՔԻ ԻՍԱՅՐԻԷԻ

ՇՈՒԿԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄՆԵՐԸ

1880 ՄԱՐՏ 1 ՇԱՐԱԿ ՕՐԷՆ ՄԿՍԵԱԼ

ՄԻՆՁՆԻ ՄԱՐՏ 15

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Երազման Էջեր	Թիւ
12 30	Եֆէնտի Գաբրիել Մէլար. Պէյլէ. Թար. Եֆէն. Սթէն. 33	
	Պայան. Բ. Հիսար. Պէյլէ. (Արեւմտեան զինուոր չուգեանուն հետ պիտի հաղորդուի):	
1 30	Եֆէնտի Մէլար. Պէյլէ. Թար. Եֆէն. Լիւր. 20	
	Բ. Հիսար Պէյլէ.	
2 15	Բ. Ա. Գաբրիել Մէլար. Մէլ. Պէյլէ. Թար. Եֆէն. 32	
	Նիւ. Սթէն. Լիւր. Պայան. Բ. Հիսար. Պէյլէ. Արեւմ. Օրթաք. (Ռ. Բարթ. օրերը Գաբրիել. Պէյլէ.)	
3 45	Մէլար. Պէյլէ. Թար. Եֆէն. Սթէն. 33	
	Լիւր. Բ. Հիսար. Պէյլէ. Արեւմ. Գաբրիել. Օրթաք. Պէյլէ. (Ռ. Բարթ. օրերը Է Կ. Զին Եֆէնտի Գաբրիել):	
5	Եֆէնտի Մէլար. Պէյլէ. Թար. Եֆէն. Լիւր. 21	
	Պայան. Բ. Հիսար. Պէյլէ. Արեւմ. Օրթաք. Պէյլէ. (Բացի ուրիշներէ):	
6 30	Եֆէնտի Պէյլէ. Թար. Պէյլէ. Բ. Պայան. Եֆէն. 4	
	Լիւր. Գաբրիել. Բ. Հիսար. Գաբրիել. Արեւմ. Պէյլէ. Պէյլէ. Օրթաք. Գաբրիել. Պէյլէ. Լիւր. Եֆէն.	
8	Ա. և Բ. Գաբրիել Եֆէնտի Մէլ. Պէյլէ. Թար. 20	
	Պէյլէ. Եֆէն. Լիւր. Պայան. Բ. Հիսար. Պէյլէ. Արեւմ. Գաբր. Օրթաք. Պէյլէ. (Ռ. Բարթ. օրերը Սթէնտի):	
10	Մէլար. Պէյլէ. Թար. Եֆէն. Սթէն. 22	
	Լիւր. Բ. Հիսար. Արեւմ. Օրթաք. Պէյլէ. Պէյլէ.	

Արեւմտեան Էջեր

12 45	Արեւմ. Գաբր. Օրթաք. Պէյլէ. 28
1 15	Արեւմտեան Էջեր, Գաբրիել. Օրթաք. Պէյլէ. Գաբրիել. 2
1 45	Պէյլէ. Արեւմ. Գաբրիել. Օրթաք. Պէյլէ. Գաբրիել. 22
2 30	Արեւմ. Գաբր. Օրթաք. Պէյլէ. 28
3 15	Արեւմ. Գաբր. Օրթաք. Գաբր. Պէյլէ. (Բացի ուրիշներէ) 2
10 45	Արեւմ. Գաբրիել. Կաբրիել. 21
10 45	Գաբրիել. 28

Արեւմտեան Էջեր

12 45	Պէյլէ. Բաշապ. Բ. Փաշա մահ. Գաբրիել. Ա. Զին. 21
	Թար. Գաբրիել. Պէյլէ. Պէյլէ. Պէյլէ. Պէյլէ. Գաբրիել.

ԻՍՏԱՆԻՍԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Էրազման Էջեր	Ժամ	Էրազման Էջեր
1	1 45	1 45	8 30
1 25	1 40	1 40	9
2	2 40	2 40	9 25
2 30	2 40	2 40	9 50
2 55	3 40	3 40	10 10
3 30	4 40	4 40	11
4	4 40	4 40	11 20
4 25	5 10	5 10	11 40
5	6	6	11 50
5 25	6 30	6 30	12 5
6	7 40	7 40	
6 35	8	8	
7 40			

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Ժամ	Էրազման Էջեր	Ժամ	Էրազման Էջեր
1 45	6 45	1 45	6 45
1 45	7 15	1 45	7 15
2 15	8 10	2 15	8 10
2 45	8 50	2 45	8 50
2 50	9 20	3 20	9 20
3 20	10	3 50	10
4	10 30	4 30	10 30
4 30	11 5	5	11 5
5 15	11 35	5 40	11 35
5 45	12 5	6 10	12 5
6 15			

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի
բաց ի կիրակի և տոն օրերէ:

Բաժանորդագրութեան տեղն է Գա-
րառում Ստանբուլի ճամբարի թիւ
198, Նորո խան Մասիսի խմբագրատե-
նը: Իսկ գաւառացի մէջ հեռուեալ հոգա-
բարձուաց գրառումները:

ԿԱՐԻՆ. Կարապետ Էֆ. Զաքարեան.
ԵՐԶՆԿԱՍ. Թ. Դաւաթ Էֆ.
ՍԵՐԱՍՏԻՍ. Նազարէթ Էֆ. Թ. Իս-
թամբուլեանց:

ՍԱՄՍՈՒՆ. Նշուար Էֆ. Մարտեան.
ԿԻՐԱՍՈՒՆ Գ. Էֆ. Խ. Մաղմաշեան.
ՌԱՏՈՍՈՒՆ. Արթ. Տ. Արիստակէս ա-
ւագ քահանայ ձեռնադրեալ:

ԶՄԻՆԻՆԻՍ. Գրիգոր Էֆ. Մաքրեան.
ՆԻԿՈՒՄԻՆԻՍ. Խառով Էֆ. Կահրեան.
ՏՐԱՊԵՆԻՍ. Ս. Էթմէքեան Էֆ. Եֆէնտի.
ԵԻՐԱԿԻՆԻՍ.

ԳԱՐԵԲԵՐԴ. և ՏԵՐԱՍՄ. Կիրակոս Էֆ.
Ս. Դաւաթեան.

ՄՈՒՆ. Յակոբ Էֆ. Յարութեան.
ՎԱՆ.

ԲԵՐԻՍ. Սեդրակ Էֆ. Խառմաշեան.
ՏԻՐԱՍՏԻՍ ԿԵՐՏ. Թովմաս Էֆ. Թաշ-
ճեան.

ԿԻՐԱՍՈՒՆ. Գեորգ Էֆ. Ոսկերչեան.
ՅՈՒՐԵՆԻՍ. Յէրշաա Էֆ. Յէրշաաեան.

ՏՓԻՍՈՒՆ. Պ. Նիկողայոս Տ. Ղառնդեան.
ԿԱՐԱՍՏԻՍ. Պաւլոս Էֆ. Հեքիմեան.

ԻՍՏԱՆԻՍԱՐ—ՏԵՐԱՍՄ

Կ. Ս. Իրիթիճեան

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

ՂԱՍԱԹԱ ՆՕՐՈ ԻՍՆ